

վանական հաստատութիւնները, այլ եւ քաղաքերած ազգայինները, ունենալու անոնց հետ մտերմական աղերս, գետեղելու իրենց դատակները անոնց դպրոցներու մէջ եւ օգտուելու արեւմտեան գիտութենէն: Բնականաբար պիտի հնչէր անոր բարերարութիւններու համբաւը լատին առաքեալներու բերնով նաեւ Արեւմուտք:

1629ին, Օգոստոսին, գրեց իրեն Ս. Ժողովը շնորհակալութեան գիր մը, զոր պիտի հասցնէր Նոր-Ջուղայ Գաղղիայի Նուիրակը. կը ներկայացնեմ այս տեղ նամակին պատճենը հայերէն թարգմանութեամբ:

Առ հայ խոջայ նազար.

(Prop. Lettere volgari, an. 1629, vol. 8, f. 132.)

Նորին Սրբութիւնն Տեառն մերոյ եւ այս Ս. Ժողովը վերահասու եղաւ այն նպատակորութեանց եւ ձրից մասին, զորոնք ցոյց տուած էք այդ կողմերը գտնուող Կապուչին Հայրերուն: Մեր Տէրն եւ այս իմ վերամեծառ Տեարք շատ ուրախ եղան որ կը գտնուի հող անձ մը, որ իրենց առաքեալներու հանդէպ ունի այնքան սէր եւ գուր: Ասոնք հրամայեցին ինձ որ յայտնեմ Ձեզ Նորին Երանութեան պատշաճական շնորհակալութիւնն փոխարէն Ձեր մեծանձնութեան եւ քրիստոնէական բարեպաշտութեան առատաձեռնութեան, խընդրեմ միաժամանակ նաեւ, որ ապագային երբ պատահին առիթներ, զանց չընէք օգնել ա-